


ՏԻՐ ԵՆ ՏԻՐԷՆ
Ն. ՓՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
ճնորհն. ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐԻԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ԶԱՄԱՐ	
Տարեկան որոշ գումար	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԻ	
Տարեկան	30
Վեցամսեայ	18

H. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐԻՆ ԿԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
հոնքագրութեանն տրայ է :

հոնքագրութեանն ողորմած
գրութիւնն էս չ'էն տրայ

Ս.Զ.Մ.Ս.Ր.ՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

ԳՈՐԾ ՓՆՏՈՒՊԼՆԵՐՈՒՆ

«Արշալոյս» ի ծաւալը անշուքիկայ երբորդ շրջանի սկիզբէն (1 Օգոստոս) ծ սիւնակներու վերածել արդարեւ ըլլալով, գրաւարներու պէտքը զգալի պիտի լինի. և որովհետեւ Եգիպտոսի մէջ այդ արհեստին հետեւողները հարուազիւտ եղած են ասկէ առաջ տպագրութեան գործը շատ սահմանափակ լինելուն համար, հարկ է որ գրաւարութիւնը այլ ևս արհեստներու կարգը անցնի և անորմով զբաղողներ գտնուին :

Աւտի անոնք որ կը փափաքին գրաւարութիւն ուսանիլ և իրենց ապրուստի միջոց հայթայթել, թող դիմեն թերթի խմբագրատունը, ուր վարժ գրաւարի մը առաջնորդութեամբ քիչ օրէն արհեստի մը տէր պիտի լինին :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

Օտարն է խօսքը : Լսե՛նք : Հայր ըսկանք է իր հորազատին վրայ կասկածիլ, և անոր սրտէն ու բերնէն թափող անուշ «ՁԱՆԱՅՐ» ն ու «Վեօգիլ» ը ընդունիլ իբրև «գիտ» ի, թշնամութեան, ատելութեան համարիչ :

Արտասահմանի մեր կուսակցութիւնները, մեր անմիաբանութեան դուցէ սերունդները, ամենէն աւելի թող լսեն այդ օտար, այդ անկեղծ հայաստի ձայնին :

Պառակտուի, դաւադրութեան չար դեր մեր մէջ խոր անլրպեա մը բացաւ : մեր ներքին և արտաքին թշնամիները համալուծեա են թէ այդ դեր պիտի լինի մեր գրեւոր ուսողը, մեզ կ'ըմտողը : անձ ատոր գէտ պէտք է ուժեղ մարտիչ, ու տեղի չ'տալ որ իւրաքանչիւր անգամ մեր ջարդերէն և արիւնհեղութիւններէն վերջ մեր քթին խնդան : Մենք ենք միայն որ չենք հասկնար, կամ չենք ուղեր հասկնալ միտքեան գերազանցութիւնը, օտարները մեզմէ լաւ են հասկցեր, և ամօթ մեզ համար որ օտարը սկսեր է մասնանի ընել մեր մեծ թերութիւնը : Լսենք այդ անշահախնդիր ձայնին :

Հայեր, պիտի լսե՛նք արդեօք որ մը, մեր գլխին վայ տալէ առաջ, այդ ձայնը, պիտի ընդունինք, պիտի միտնանք :

Մեր փափաքն է այդ :

Մենք թարգմանաբար մէջ բերելով Անաթօլ Պրանսի զեկազարութեամբ հրատարակուող «Փրօ Արմենիա» ի այդ մեծա-

նուն խմբագրին «Հայկական միտքիւն» խորագրով վերջին առաջնորդողը, ուշագրութիւնը կը հրաւիրենք բոլոր մեր գաղութներու ցան և ցիր ու ամեն ուղղութեամբ տատանուող անհատներուն ու մարմիններուն, որ լսեն և միտնան մեր Մայր Հայրենիքը փրկելու վսեմ գաղափարին շուրջը դարձող ամենէն արժանահաւատ կազմակերպութեան շուրջը : դժուար չ'պիտի լինի կը կարծենք այդ միութիւնը առաջ բերել եթէ կուսակցութիւններու ամենէն անկեղծները ու ողջամիտները իրար ելք-տրականան և իրար թափանցեն :

Ահա այս ապօրէն է որ Անաթօլ Պրանսի նպատակալարմար առաջնորդող յօդուածը ի մէջ կը բերենք :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«Ամեն անոնք, որ, ինչպէս ևս, վրաստանութեան արժանանալով հիւրնկալուած են Եգիպտոսի և Պրանսի հայկական շրջանակներէն, կը պահեն իրենց սրտին մէջ խորին զարմացմունք և ջերմագին համակրութիւն գէպի այս արտաքայ կարգի իր հայրենիքին նուիրուած, բայց անհայրենիք մնացած աշխարհ ցեղը : Բոլոր հայերը, որոնցմէ շատեր տարագրուելու բաղաւորուած են, դիտակից անձկութեամբ այլևս իրենց եղբայրներուն կողմէն կ'սպասեն իրենց մահուան սպառնացող վտանգի վճարուելուն ինքիբր : Անոնք այլևս լաւ հասկցած են որ Սուլթանական քաղաքականութեան ուխտը կը կայանայ բոլոր հայերը մեթոսի կերպով բնաջնջ ընելուն մէջ, գիտեն նաև այն թէ գեռ պէտք է ազատել այն ինչ որ կարելի է փրկել և որը դորձագրելու համար կը պահանջուի մեծ ճիգ և մանաւանդ ամենամեծ զոհողութիւն :

«Սուլթանի ծրագիրը անիրազորելի դարձնելու ամենէն ազգու միջոցն է, մանրամասն հետազօտութեամբ բարձրագույն աշխարհիս հոշակիլ այն բոլոր արարքները, որ առաջին օրէն տեղի ունեցած են : Ասոր մէջ մենք կարող ենք օգնել հայերուն, մենք կարող ենք այդ ընել մասուլը շահագործողներու լուծեան մէջէն ազատ խօսելով : Կոտորածները կը դադարին այն օրէն, երբ անոնք ամբողջ աշխարհին կը հոշակուին : Կառավարութիւնները թող տունն որ ըլլան անոնք, և այնպէս ձեւացուին իբր թէ իրենք իրազեկ չ'են գործին : Յետ այս պէտք է որ անոնք իրազեկ ըլլան և պէտք է որ դիտուի թէ անոնց զեկույ ուսած է արդէն ամեն ինչ :

«Այն ինչ որ բոլոր աշխարհի հայկական շրջանակներուն ամենամեծ պէտքն է, միտքիւնն է. բաւական չ'է որ հայերը հետամուտ և ուշադիր ըլլան իրենց գործին. պէտք է որ այդ ուշադիր հետամուտութիւնը միութեան մէջ ամփոփեն և միտնալու վարժուին :

«Պէտք է որ անոնք մէկ միտք մէկ հոգի դառնան : Պէտք է որ իրենք իրենց մէջ իրարու լսող լինին իրենց եղբայրներուն սղտանացող վտանգին գէտ պաշտպանուելու համար :

«Այդ պայմանով միայն իրենց ձեռնարկած գործը կրնայ ազգու և յօրատու լինիլ, որովհետև այդպէսով գործը կը լինի ընդհանրական :

«Իրենց ձեռնարկը համամարդկային է. բովանդակ աշխարհ այդպէսով միայն կըրնայ շահագրգռուիլ իրենցմով :

«Երբնայէն նա բոլոր աշխարհէն լուսելու համար, բոլոր հայերուն ձայնը պէտք է լինի մէկ ձայն. իրենց փրկութիւնը միայն իրենց միացեալ գործին և ձայնին մէջ կը կայանայ :

Ա.Ս.Ք.ՕԼ. ՖՐԱՆՍ

ՆԱՄԱԿ ԳԱԶԻՐԷԻՆ

Տիար Յ. Բիւրքեան, որ անցեալ տարի Լսարան—Ընթերցատուն մը կազմելու գաղափարին հզօր աշակից գտնուած, և նոյն իսկ անոր Գործ. Ժողովոյն Գանձապետն էր, այդ ընկերութեան սեփականութիւնը նշանակուած «Նոր-օր» թերթի մէջ յօդուած մը տեսնելով՝ փութացած է պատասխան մը գրել տալ, և թէպէտև իր զրկած գրութեան ինչ ինչ մասերուն մէջ կատարելապէս համամիտ չ'ենք իրեն, սակայն անկողմնակալ զգացումով բացառաբար հրատարակութեան կուտանք իր յօդուածն, որչափ որ ալ «Արեւիկայի» Լսարան—Ընկերութեան » սերտաուսթիւնը ունեցող թերթին հետ նոր զլուխ մը բանալու անախորժութիւններէն մենք զմեզ հեռու պահելու պէտք է :

ԵՐԿՐՈՐ ԽՕՍԻՔ «ՆՈՐ ՕՐ» Ի

Կրթութիւնը, ինչպէս նաև կենցաղավարութեան տեսակը, մեծ ազդեցութիւն ունին մարդոց սրտին ու նկարագրին վրայ : Յաճախ են է որ արգելք կը գտնուայ կենցաղակրթութեան և շատ անգամ երբ ծայրայեղ է կ'սպասուանայ մարդուն խաղաղութեան և զայն բնածին միտումներէն կը չեղեցնէ :

Կը խորհրմ որ մտաւորական ազատ տշխարհին մէջ մարդոց իմացականութիւնը եւ աւորաւն տուած գործունէութիւնը, շահախնդրութիւնէ ուղղուած կամ ոչ, ժողովրդին օգտին հետ պիտի կապուի: Օրինակի համար թերթ մը գերատանց միջոցն է ժողովուրդներու կեանքն բարեշրջելու, բարքն ազնուացնելու եւ միտքը մշակելու:

Ազնիւ ընթերցողը գիտէ թէ տեղւոյս ազգային գործերը՝ եկեղեցին, դպրոցը, ստաշնորդարանն են, որոնցմով ամեն հայ անհատ կ'ըզբաղուի, ինչ դասակարգէ ալ ըլլայ:

Ներկայ ամսոյս 25 ին Նոր-Օր թերթի 92 թուոյն մէջ զգալի գրչի մը « պատասխան մը » վերնագրով քննադատականը կարգացի, որն ինքնին գրողին արժանիքը ի յայտ կը բերէ. բնականաբար աւելի չ'ապաստիր անկէ, որ ամանց վերաբոյժ ըլլալու, վէճեր կը մկրտուի:

Չենք կրնար արգիլել մեր ինքնակոչ գրարդէտը որ քննադատական չը գրէ, բայց կը խնդրենք որ կարգայ Ֆրանսացի բանաստեղծ վարպետին ու խօսքը՝ թէ « քննադատութիւնը գիւրբն է, արուեստն է գժուարին »:

Յօդուածագիր պարոնը կը գրէ թէ՛ « Այվազեան Սրբազանը վախկոտ է, մենք ալ կը խոստովանինք, Սրբազանը թոյլ է ու գործունէակ չ'է, բան մը որ սակից առաջ իր կենսագրութեանը մէջ ալ յայտարարած ենք ըսելով թէ՛ « Այվազեան Սրբազանը եթէ ոչ ազգեցիկ գէթ մեզմ' եւ հայտարար եկեղեցական մ'է » են: Չենք գիտեր թէ Պարոնը որ բառարանէն առնելով իրարու հետ կը հաշտեցնէ ազգեցիկ եւ մեզմ' վախկոտ ու թոյլ բառերուն նշանակութիւնները: Եւ ինչպէս կը վճռէ Առաջնորդի մը թուութիւնը իրեն անձանօթ երկրի մը մէջ, 6-7 ամսուան պաշտօնավարութենէն դատելով: Այս պարագային իրեն կը յիշեցնենք « Այվազեան-Մամուլէիան հարցը » վերնագրով իր քաղաքական () տեսութիւնը:

Գալով քահանայի մասին, քահանայ մը կրնայ բանգէտ չ'ըլլալ, սակայն անիկա ազգին, ժողովրդին պատիւը ըլլալէ չը դառնիր: Չենք ըսեր թէ պէտք է աչք գոցել զեղծմաներու կամ դատապարտելի արարքներու, բայց օրէնքի սահմանագիծը յարգելու համար՝ ամուսնութեան պարագայի մը մէջ օրինաւոր վկայագիր պահանջող քահանայ մը գեղձող կոչուլ, եթէ չ'ըսենք ապաւնութիւն գէթ հեղինակ է, եւ այդպէս մտածողներու հոգեկան վիճակը արգահատանքէ տարբեր զգացում մը չը ներշնչեր:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ANCH' IO SON UOMO

(ԵՍ ԱՂ ՄԱՐԿԻ ԵՄ) (1)

Ա.

Շուրջ տասներկու տարի առաջ առաջին անգամ լուցի այս բաները, արտաբերուած տարագիր Իտալացոյ մը բերնէն:

Ճիւղումս՝ Սիբիական նաւահանգիստ քաղաքներէն Ս. ի մէջ միտակ ներկայացուցիչն էր իր երկրին: Ո՛վ գիտէ ս'ըպիսի գիպուածով հոն նստուած էր տարիներէ ի վեր: Եթէ իւրաքանչիւր վտարանդի յայտնէր իր գաղտնիքը, սքանչելի ստաքիտութեանց եւ քսամետի եղերերգութեանց անսպաս հատորներով պիտի օժտուէր մարդկութիւնը: Արհեստով՝ տաղձագործ, բընաւորութեամբ գուարթ, փոքրահասակ առոյգ մարդ մ'էր յիսնամետոյ Մանսթ խիտ փոքր միջադէպ մ'ունեցած էր այս անձը այդ օտար հողի վրայ: Երբ առտու մը՝ ազամաշուսին՝ իր գործին կ'երթար, ճամբուն վրայ գտաւ կտաւեղէնի մէջ փաթտուած մանչ երտխայ մը, զոր որդեգրած եւ մեծցուցած էր, եւ հիմայ ամուսնացնելու կը պատրաստուէր: Խորշումս, յազնած գէմքը անպատու մ'արեւստութիւն մը կ'արտայայտէր երբ ձեռքերը ետեւը կապած, գլուխը մէկ կողմ հակած, կուզիլը անկած կ'անցնէր կ'երթար քրկտուած քայլերով, կիտախուր աչքերով:

Ամբողջ օրը կ'աշխատէր անդու, անդա-

Բայց նախ, պէտք է պարզենք թէ ինչպէս եղած է նոյն գրութեան մէջ ակնարկած ամուսնութիւնը: Յօդուածագիր պարոնը իր քոյրը ամուսնացնել կ'ուզէ: Ապա իր մը հետ, որն Յոյն եկեղեցին մկրտուած է եղեր: Քահանայն կը պահանջէ որ Յոյն եկեղեցոյ վկայութիւնը պարունակող վկայագիր մը բերուի, բաւական աշխատութիւնէ յետոյ կ'առաջարկուի եւ փոխանակ այս տեղի՝ Աղէքսանդրիոյ եկեղեցին զը պահուի (*): Եւ եթէ զեղծում մը կամ պարսաւելի արարք մ'էր քահանային ըրածը, ցարդ ինչո՞ւ չը յայտնեց, քանի որ առիթ չ'էր պակսեր:

Յ. ԳԻՒՐԿԻՆ

(Մնացեալը յաջորդով)

(*) Արդէն աղիքանդրիոյ եկեղեցին կամ լաւ եւս է ըսել Վահրաւ Վարդապետ Ազարեանը առաջին անգամը չ'է որ այդպիսի բան մը ըրած է: Հաստատուելու, որովք յարմար առիթի կը գրեմք րենս:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պէրութ 30 Մայիս. — Երեք մեծ տուներ վրած են. տարբեր ազգութեանց պատկանող 50 հոգի մեռած են վրատակներուն տակ. պատահարը թաղապետութեան անհագութեան կը վերագրեն. բոլոր հիւպատոսները օգնութիւն հասցնելու համար կը աշխատին:

Հոռով 1 Յունիս. — Իտալիայ թագուհին աղջիկ զաւակ մը ծնաւ. Երեւկայտի նախագահ Պ. Չանաւոտելի այդ լուրը հաղորդեց Մերակուտական ժողովին որը յանձնարարեց նախագահին իր շնորհաւորութիւնները յայտնել երկրի Վեհապետին: Նիտտերը դադրեցան ինչան ուրախութեան: Նորածին Բրէնսէսը պիտի կոչուի Իօլանտա Մարգարիտա:

Պուտափէշտ 4 Յունիս. — Բուսականութիւնը Հունգարիոյ մէջ տիրող երաշուտութիւնէն չարաչար կը վնասուի:

Բեթէրսպուրկ 4 Յունիս. — Թիւրքէստանէն եկած վերջին լուրերուն վրայ եր-

գար. եւ երբ իրիկունը՝ Իպրանիոյն ճաշարանին մէջ՝ սեղանի մ'առջեւ կը նստէր. իր որդեգիր-աշակերտ-ժառանգորդը գիմացն ունենալով. կը սիւրէր իր սիրուէի մը որ ինքզինքը ցուցած կը տեսնէ սիրեցեակին հայելոցած աչքերուն մէջ նուազուն ակնարկներով ինքն իր վերայ զմայլելի գիւնելից զաւակի մը մէջ՝ ծանր ծանր գրեթէ համաշարօրէն ծամելով եւ անհրկարապէս զոհուանակութիւն մ'արտաբերելով: Ճաշէն ետքը կ'երթար քաշելու իր ծխախոզը ծովեկերիայ որճարաններէն միոյն մէջ, ուր քաշածանօթ էր, եւ ազտո՞ գուարճարանելու որչափ որ կ'ուզէր:

Սակայն օր մը, մի քանի անձնաւորութիւններ, որոնք՝ այն միջոցին՝ ազգային բարձրագոյն դասակարգին պատկանելու յարաբերութիւններէն ունէին, ուղղելով ընդ նախագահութեամբ հաստուտ, մեծափոր եւ կարմրայտ Աբգար աղայի՝ լուրջ եւ հանգարտ գլխով խորհրդակցիլ եկեղեցական եւ դպրոցական ինչ ինչ կարեւոր խնդիրներու վրայ, զոնէն զուրս նետել տուին խեղճ ճիւղումս, որ այդ ազատամուլ գլուխներու կողմէն գործուած բանութեան գէմ կը բողբոջէր գոչելով « Anch' io son uomo » բառեր՝ որոնք իրենց արժէքը բողբոջին կորանցողին շառաչածայն ապտակի մը մէջ, զոր Աբգար աղան իջուց Իտալացոյն այսերուն վերայ:

Եւ երբ վերջապէս նախագահը՝ յաղթական՝ բազմեցաւ իր աթոռին վրայ, այդ բարեօրիններ գլուխներն ժողովելու եւ բարեկարգիչ Մուսայէն ներշնչուելու անմեղադրելի նպատակաւ իւրա-

կրի դրութիւնը շատ կնճռոտ է. վախ կայ թէ ժողովրդային ընդհանուր ապստամբութիւն տեղի պիտի ունենայ:

ՆՈՒՐԱՍՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Արտաշէս Մարլեան մէկ օրինակ « Մահամադրութեան տետր » եւ մէկ օրինակ « Լուսինեանք » գրքոյկէն կը նուիրէ Աղէքսանդրիոյ Գրադարան-Ընթերցարանին:

Նոյնպէս Տիար Տէրմուք Բարթողեան մէկ օրինակ « Մահամադրութեան տետր » կը զրկէ կիպրոսի Ազգային Առաջնորդարանին, Տեղւոյն Գեր. առաջնորդին հասցէովը:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Իտիվական ընտանիքին այն անգամերը, որոնք գործնապէս իրաւունք ստացած են Բուէնս եւ Բուէնոէս յորջորջուելու տիրոջսին, թուով 83 են, որոնցմէ 28 ը Բուէնս եւ 55 ը Բուէնսէսներ են:

— Վարան լրագիրը կը դրէ թէ Գահիրէի մէկ Գոսիւլաթը ձերբակալած է երկու ճարպիկ կեղծարար եւրոպացիներ, որոնք շինած են բազմաթիւ հաստատութիւններու, ինչպէս Քրէտի-Լիօնէի, Տաիրէի ամիրէի, Քէնէի եւ Ասուանի երկաթուղիներու, Գանալ տը՝ Սիւրիի, եւ. եւ. կեղծ թուղթերը:

— Առողջապահական վարչութիւնը կը զեկուցանէ թէ Զակազիկի մէջ ժամտախտի մի նոր դէպք եւ մի մահ է պատահած:

— Մարքօնի հնարած սնթել հեռագրի գործածութիւնը ընդունուած է եգիպտական բանակին մէջ:

— Վերջին անձրեւներու պտտառաւ նեղութիւն ստորին հոսանքներու վրայ դանուող վիզթօրիա նիանդա լճի շուրջ իր կանոնաւոր վիճակէն երկու ոտնաչափ բարձրացած

քանիւրը մի քանի սիլաթիք ծխելէն եւ վեցեակ մը զաւաթ օդի անկեղէն ետքը պիզիկի կանաչապատ սեղանին առջեւ բողբոջեցան եւ բարեկարգութեան նուազ սարկազական գործը ուրիշ օրուան յետաձգեցին:

Այս կերպով ժամանակը սահեցաւ, անցաւ եւ թէեւ գումարուներ եւ անհամար « ինչպէս պիտի ընենք » ի հարցուններ կրկնուեցան շաբաթը առ նուազն եօթն անգամ, բայց Մուսայն միշտ գանդաղ՝ գոհացուցիչ պատասխան մը տալու, պիզիկի սեղանը եւ օդի սրուակները կը մղէր շարունակ ժողովակախոս սուղեւ: Եւ ըստ սորին կոչուած դատակարար ժողովուրդը մեծապէս կը զարմանար տեսնելով որ՝ հակառակ այնպէս ժողովներու եւ վիճարանութեանց, որոնց ներկայ գտնուելու իրաւունք չ'ունէր, արեւը միշտ կը շարունակէր միեւնոյն ծակերէն եւ ճեղքերէն սպրդիլ եկեղեցոյ մէջ, անձրեւը հետզհետէ աւելի կը լուար. աշակերտները դասարանի մէջ, տեղւոյն միտակ վարժապետը կը շարունակէր ամենուն սաքն ինչալու՝ որպէսզի իր անցած ամսականներէն բան մը փրցնէր իր հիւանդ մայրը ինչամեղու համար: Եթէ փոխուելու ըսել կ'ուզենք՝ բարեփոխուելու հակամէտ բան մը կար, այն ալ Աբգար աղան էր որ երթալով աւելի կ'ուսեցնար, տէրտէրն էր որ օդի գաւաթներուն թուոյն վրայ յաւելուներ կ'ընէր, գանձապետն էր որ իր անձին համար նոր շէնքի մը կարողութան կը ձեռնարկէր:

Մինչ այս կողմէն գործերը այս կանոնաւոր եւ աւանդական ուղղութեամբ կ'երթային, միւս կողմէն ճիւղումսին ուրախութեան չափ

է. ջրի այդ բարձրացումը եզրագծակալ հաս-
րելու ոռոգման բարեբար նշանակ մը կը նը-
կատուի :

—Յէյուսի մօտ Ատուա կայարանի առ-
ջև մայր մը և իր աղջիկը շոգ եկառքէն ին-
կած և մեռած են :

ԱՂՔԱՏԱԻՆՍՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—o—

—Տեղւոյ Աղքատախնամ ընկերու-
թեան Գործ. Ժողովոյ Տիար Ատենապետը
կը խնդրէ մեզմէ, որ հրապարակաւ զեկու-
ցանենք և Աղքատախնամ Ընկերութեանը
անդամոց ուշադրութիւնը հրաւիրենք այն
բանի վրայ թէ՛ երկիրս Ընդհ. Ժողով տեղի
ունեցած չ'է ընկերներու բացակայութեան
պատճառաւ և թէ այս անգամ ալ՝ կիրակի
օր յետ եկեղեցւոյ, եթէ իրենց ուղղուած
հրաւիրագրերուն չ'պատասխանուն զործ-
նական ներկայութեամբ, Աղքատախնամ Ըն-
կերութեան գոյքերը պիտի յանձնուն տեղ-
ւոյս Աղգային Առաջնորդարանին :

ՅԱՊԱՂՈՒԹ . —Ներողութիւնը կը խնդ-
րենք մեր ընթերցողներուն՝ Փօրմայի խան-
գարման պատճառաւ թերթիս յապաղմանը
համար :

Բաղաքի Գալստեան վարժարանի Տե-
սուչ Տէր Սրապիոն քահանայէն, հետեւել
«վիճակացոյցին» երեք անգամ հրատարա-
կութիւնը խնդրուած է :

ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

—o—

Տարեկան հարցաքննութիւնների աշա-
կերտաց և աշակերտուհեաց Գալստեան
երկուսն վարժարանաց և Մանկապարտիզի-

—o—

չ'կար Այս մարտուկը այլևս ճաշարաններու և
սրճարաններու մէջ չ'էր տեսնուեր : Հազիւ խա-
նութիւն գոցած՝ իր սանին հետ կը վազէր տուն,
ուր մանկամարդ և գեղատեսիլ կին մը զանոնք
կը գիմաւորէր ժպտելով և իտալացւոյն գիրկը
կը նստէր գեղափթիթ մանկիկ մը. և ան այն
ատեն ձիւրուամօ կ'զգար թէ ևրջանիկ էր : Բո-
ղոքական որբունի մ'էր իր հարսը : Ընթացման
իւր անդրձրեղեղեան փրկիտփայտութեամբ բնաւ
անպատեն տեսած չ'էր միացնել կաթոլիկ մը,
բողոքականուհեոյ մը հետ : Այս մասին գիտողու-
թիւններ ընող քահանային և պատուելիին պա-
տասխանած էր :

—Վերապատուելի Հայր, Արժանապատիւ
Երէց, ես՝ որ միշտ դժուարահաճ եղած եմ՝ վա-
ղուց կը փափաքէի ճշմարիտ կրօնքի հետեւող մը
ունենալ՝ սոսնս մէջ. արդ այսօր փափաքիս լը-
րուամը կը տեսնեմ յանձին որդեգրիս ձիւղէբբէյի
կամ հարսիս Մարիէթիթայի, լաւ չ'եմ կրնար ո-
րոշել : Ըստ իմ համոզմանս հարս և և փեսայ կը
պաշտեն միեւնոյն Աստուածը, միեւնոյն Փրը-
կիչը. ձգենք որ իրենք իրենց համաձայնին զայն
պաշտելու եղանակին վրայ : և հասնին ճշմար-
տութեան՝ որ կը ներկայանայ խուզարկողին :
Բայց և այնպէս ի՞նչ ապեցողցի բան կ'ըլլայ
եթէ սոսնցմէ մին միւսը համոզէ՝ առանց իրու-
րու գլուխ պատուելու կամ զիրար բանադրելու,
և երկուքը ընդգրկեն միեւնոյն գաւառանքը :
Հա՛, հա՛, գաւաթ մը գինի՛, վերապատուելի
հայր, Արժանապատիւ Երէց :

Սակայն անխառն չ'էր այս մարդուն ու-
րախութիւնը : Սատանաներ տեսածի պէս կ'ըլ-

Տարեկան հարցաքննութիւնները՝ ըստ
որոշման Մեծապատիւ հոգաբարձութեան՝
սկսուելու են առաջիկայ հինգշաբթի, ամ-
այս 6 ին :

Իւրաքանչիւր օր՝ բացի կիրակէ և տօն
օրերէ՝ տարեկան հարցաքննութիւնները՝
դաստիարակներ և զրօսանքներ ընելէ վեր-
ջը՝ դադարելու են երեկոյեան ժամը 5 ին :

Հարցաքննութիւններին ներկայ լինե-
լու կը հրաւիրուին ամենայն հայ, ինչպէս
այր, նոյնպէս և կին մարդիկ՝ նամանաւանդ
աշակերտաց և աշակերտուհեաց ծնողները :

ԿԱՐԳԱՌՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Հարցաքննուելու են նախ փոքր և ապա
հետզհետեւ աւելի բարձր կարգերի աշա-
կերտները և աշակերտուհիները :

Յունիս 7 հինգշաբթի առաւօտեան ժա-
մը 8 էն հարցաքննուելու են Մանկապար-
տիզի Ա. և Բ. կարգերի աշակերտները և ա-
շակերտուհիները՝ հայերէն լեզուէ, թուա-
բանութենէ, կրօնագիտութենէ, գծագրու-
թենէ, իրագիտութենէ, վայելչագրութենէ
և երգեցողութենէ :

Յունիսի 8 ին, առաւօտեան ժամը 8 էն
սկսեալ՝ հարցաքննուելու են Մանկապար-
տիզի Գ. կարգի աշակերտք և աշակերտու-
հիք՝ կրօնագիտութենէ, հայերէն լեզուէ,
թուաբանութենէ, իրագիտութենէ, ձեռա-
գործութենէ, գծագրութենէ, վայելչագր-
ութենէ և երգեցողութենէ :

Յունիս 9 և 11 ին, առաւօտեան ժա-
մը 8 էն հարցաքննուելու են Գալստեան
վարժարանի Ա. կարգի աշակերտները՝ կրօ-
նագիտութենէ, բարոյագիտութենէ, թը-
ուաբանութենէ, հայերէն, արաբերէն և
անգղիերէն լեզուներէ, գծագրութենէ,
վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 12 և 13 ին, առաւօտեան ժա-

լար, երբ պատահամբ տեսնէր այն բարձրագի-
տնաբեր, որոնք՝ օր մը՝ գինեանէն դուրս նետել
տուած էին զինք. և որոնց մեծագունէն սպ-
տակուած էր : Ո՞խը չ'էր մարած ձիւրուամօյի սըր-
տին մէջ. ո՞խ բնական և հակաբնական զէպ
յամբարտաւանս : Երբեմն կը մտածէր խոզ մը
խաղալ անոնց, բայց անմիջապէս յետոյ կ'ըսէր.

—Անկարելի բան . ես ո՛ւր, անոնք ո՛ւր . . .
Այս միջոցին քաղաքական հորիզոնը հե-
տզհետէ կը մթազնէր Հայոց գլխուն վերեւ : Վեր-
ջապէս կայծերը այն յեղափոխական ուժերին՝
որ պայթեցաւ Գուժ-Գաբուի Մայր եկեղեցւոյն
մէջ՝ ցայտելով հրդեհեցին բոլոր գաւառները :
Ամբողջ թուրքիս սարսափահար եղած էր . Թուր-
քը հայուն կը նայէր իբր քնազարթոյց մի ա-
ռիւծի, Հայը Թուրքը կը նկատէր իբր գիշարիչ
մի գայլ : Իո՞վ ուրիշ ազգութիւնք ապշած մը-
նացած էին :

—Ի՞նչ, այս Հայերը . . .
Ամենէն աւելի շուարածները և միանգա-
մայն ամենէն աւելի ծիծաղաշարժ դէմք և ըն-
թացք ունեցողները կատարական պաշտօնեա-
ններն էին : Աստե՛ք՝ մեծ ու պզտիկ — խիստ մեծ
բացատութեամբ — գրամի, կողպուտի անուշ
հոտեր կ'առնէին՝ տարտամօրէն : Աւանդական
քննութիւնք, սպառնալիք տակաւ կը սաստկա-
նային, Բարեկամներ կը թշնամանային, և թըշ-
նամիները կը բարեկամանային : Գաւառները՝
նահանգներէն, նահանգները՝ մայրաքաղաքէն
հրահանգներ կ'սպասէին ակնդէտ :

Յեղափոխական մարմիններու, մասնաճիւ-
ղերու գոյութիւնն աւելի կը շնչուէր : Փսփը-

ժը 8 էն հարցաքննուելու են Գալստեան
վարժարանի Ա. կարգի աշակերտուհիք՝ կը-
րօնագիտութենէ, բարոյագիտութենէ, թը-
ուաբանութենէ, հայերէն և անգղիերէն լե-
զուներէ, ձեռագիտութենէ, գծագրութենէ,
վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 14 և 15 ին, առաւօտեան ժա-
մը 8 էն հարցաքննուելու են Գալստեան
վարժարանի Բ. կարգի աշակերտները՝ կրօ-
նագիտութենէ, բարոյագիտութենէ, ազգա-
յին պատմութենէ, թուաբանութենէ, հա-
յերէն, արաբերէն, անգղիերէն և գաղիե-
րէն լեզուներէ, գծագրութենէ, աշխար-
հագրութենէ և երգեցողութենէ :

Յունիսի 18 և 19 ին, առաւօտեան ժա-
մը 8 էն հարցաքննուելու են Գալստեան
վարժարանի Բ. կարգի աշակերտուհիները՝
կրօնագիտութենէ, բարոյագիտութենէ,
ազգային պատմութենէ, թուաբանութենէ,
հայերէն անգղիերէն և գաղիերէն լեզու-
ներէ, գծագրութենէ, աշխարհագրութենէ,
վայելչագրութենէ, ձեռագիտութենէ, եր-
գեցողութենէ և ձեռագործութենէ :

Յունիս 20, 22 և 23 ին, առաւօտեան
ժամը 8 էն հարցաքննուելու են Գալստեան
վարժարանի Գ. կարգի աշակերտները՝ կրօ-
նագիտութենէ, բարոյագիտութենէ, ազգա-
յին պատմութենէ, եկեղեցական պատմու-
թենէ, թուաբանութենէ, երկրաչափութե-
նէ, տօմարակալութենէ, հայերէն, արաբե-
րէն, անգղիերէն և գաղիերէն լեզուներէ,
աշխարհագրութենէ, գծագրութենէ, վա-
յելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 25, 26 և 27 ին, առաւօտեան
ժամը 8 էն հարցաքննուելու են Գալստեան
վարժարանի Գ. կարգի աշակերտուհիները՝
կրօնագիտութենէ, բարոյագիտութենէ,
ազգային պատմութենէ, թուաբանութենէ,
հայերէն, անգղիերէն և Ֆրանսերէն լեզու-
ներէ, աշխարհագրութենէ, գծագրութենէ,
վայելչագրութենէ, երգեցողութենէ, ձեռ-
ագիտութենէ և ձեռագործութենէ :

սուքները կը շատնային . մտացածին լուրեր,
այլանդակ, անիրականելի յոյսեր ականջէ ա-
կանջ կը պտտէին . գիշերները, խանութները՝
կածառատեղեոյ և տունները՝ խորհրդավայրի կը
փոխուէին :

Կատարութիւնը՝ առանց իր միտքը բա-
ցայայտելու՝ սկսած էր, այլևայլ պատճառաւ-
նութիւններով, խուզարկութիւններ ընելու,
կասկածելիներով և ունեւորները բանտարկելու
կամ աքսորի սպառնալիքով կողոպտելու :

Գրեթէ ամբողջ փոքր Ասիոյ նահանգներուն
այս ընդհանուր խառնակութեան մէջ ծովեզեր-
եայ Ս. քաղաքը մի քիչ առանձնաշնորհեալ վի-
ճակ մ'ունէր . Իրաւ, հոն ալ ժողովուրդը վախ-
ցած էր և կատարութիւնը մի քանի միջոց-
ներ ձեռք առած . զոր օրինակ, ցամաքէն դէպի
չոզենաւ ազատ երթիւնելութիւնն արգելած, ան-
ցագիրները ուշի ուշով քննելու սկսած և հոն-
դէպ Հայոց կոչա վարմունք մը բռնած էր : Բայց
վերջապէս, քաղաքը խաղաղ էր և կեանքը իր
սովորական ընթացքին մէջ կը շարունակէր :

Եւ եթէ մերայինք մի քիչ խոնկուածութեամբ
և ազգասիրաբար շարժէին, թիրուս գէթ այդ
քաղաքին մէջ շատ մը խժուժութեանց, և զըժ-
բազուութեանց տեղի չ'պիտի տրուէր : Սակայն
ո՛ւր տեսնուած է ընչաքաղցութիւն համաձայ-
նած ազգասիրութեան նետ :

Ա. ՊԱԼԵԱՆ

(Շարունակելի)

Յունիս 28, 29 և 30 ին, առաւօտեան ժամը 8 Էն հարցաքննուելու են Գալստեան փարսարանի Գ. կորգի աշակերտուհիք կըրօնադիտութենէ, բարոյագիտութենէ, ազգային պատմութենէ, թուարանութենէ, երկրաչափութենէ, հայերէն, անգլիերէն և ֆրանսերէն լեզուներէ, ձեռագործութենէ, ձեռագրութենէ, վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Առաջիկայ Օգոստոսի 27, 28, 29, 30 և 31 ին լինելու են հին աշակերտաց և աշակերտուհեաց վերաքննութիւնները, իսկ նորեկների քննութիւնները և ընդունելութիւնը համապատասխան գատարանների մէջ :

Առաջիկայ ուսումնարանական տարուայ գատարանութիւնները սկսուելու են սեպտեմբերի 3 ին :

Հանգուցեալ կարապետ Գալստեանի յիշատակը Գահիրէի հայ ժողովրդոց և ուսանողաց մէջ միշտ վառ պահելու համար որոշուած է պորգեւաբաշխութեան օրը ընել 15ն սեպտեմբերի, որովհետեւ բարերար կարապետ Գալստեանը հիմնած է իւր ուսումնարանը 1854 թուականի սեպտեմբերի 15 ին :

Տեսուչ Գալստեան երկու սեռի վարժարանաց
3 Յունիս 1901 Գահիրէ

ՄՐԱՌ ԼԱՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրի . — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն . — Ետեւ բաժանում ամեն ՀԻՆՒՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԵՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Նյուպաստի

ՀՐԷԻՑ ԲԱՐԵՔՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՄԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 2 ՅՈՒՆԻՍ 1901

1363	4762	9581	6632	391	401
1293	1960	1978	2481	3070	3209
3566	4276	4400	4509	4745	4900
4961	5032	6056	7187	8327	8440
9052	9345	9485	9558	9564	9595

ՀՅՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 2 ՅՈՒՆԻՍ 1901

4481	86	6862	1428	5684	716
848	1050	1052	1053	1094	1356
2425	2774	3362	5060	5468	6200
6377	6506	7095	8270	8517	9009
	9484	9689	9787		

Տպագրութիւն ԺՈՂՈՒՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՆԻՍՏՐԱՒ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌՔԵԱԼ ԳՐԱՄԱԳՐՈՒԻ 1 ՄԻՆԱՐ 563 ՄԻՆՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարաժիւնները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻՆԱՐ 480 ՄԻՆՈՆ՝ որ գրեթէ այլաբար ուրիշ սրէ է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա յարցուցիչ է Գահիրէ

Այլաբար մէջ գտնուող ուրիշը և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷԿՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակալուար յԱզե քսանդրիա :

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԻՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալարի փողոց . Խաղէտարի սեփականութիւն, Պրիմըլ Օլիէլի ճիշդ գիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Այլաբար ամենէն բաւարոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներքն են և ասոնց Է մինչև ցար 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիրտիսաներով և մեայնետով վարձարուած, Երաշխաւորեալ, Ասեաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական առուեսահանդիսին մէջ ստացած է :

ՀԱԳՔԱՅՈՒՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ
ԱՐԲՈՒՆԻՔԻՆ


ՀԱՅՔԱՅՈՒՉ ԱՆԿՂՈՑ-ԿԱՅՆԵՐԱԿԱՆ
ԵՒ ԹՍԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍՑ

ՀԱՅՔԱՅՈՒՉ Ն. Բ. ԽՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Չրի գտար և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ինքնակաշից և նորոգութիւն ամեն կազմի Մեքենայից



ԿՕՇԿԱԿԱՐ

Գ. ԵՒ Յ. ՊԵՏՐՐԵԱՆ ԵՂԱՐԱՐԻ

Պազար-Մուրուր ք/ա 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող, սուրբըր կոշտերու ցաւերէն ազատ պահուց և գիմացիուն կօշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պազար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիբան եղբարց, որոնց գործածած ապրանքներու տակունութիւնն և ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակույսէ վեր է :

Պէշիբան եղբարք իրենց յաճախորդացըրած յանձնարարութիւնները փութով և մեծ ինտամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ՝ գիմել իրենց . ապահովագէտ մնայուն յաճախորդ պիտի լինիք :

2-24

ԲԱՐՈՒՑԻ ԸՆՏԻՐ ԱՇՈՒԺ

Ունէինք մինչև ցար հայ մը որ գիտնար մտածել թէ՛ ամուսին ալ միծաքահակ սպասում կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել :

Ասեաւորի այդ սպաւեզին ալ օտարներուն թողուած էր :

Տիրոջ Յակոբ Վարդանեան (Սանտահանի քնտրողի) այժմ ամենաբարձր ամուսին վաճառակոնութեամբ կ'ըլտողի և միքում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր միկարնոցը Սուր-Սուտար թիւ 17 և 18 :

Անխորդախ կշիւ և չափուար գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅՐՈՒՆ

ՀՆԴԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՓԵԼԷԿԵԱՆԻ

ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Դահեկան սղ :